831.99
F-12

Ա. Յ. ԲԱԲԱՅԵԱՆ.

ԻՄ ԱԼԲՈՄԻՑ

Աշխարհը ուժեղին է.
ՆԻՑՇԷԻՑ.

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԻՆ.

Իդէալի հերոս՝ ազնիւ կոմաւոր,
Ոգեվիրաղ՝ վիշտի անձուկ ահաւոր.
Գնում ես յաւէտ՝ անյաղթ մտքերով,
Նէրս փոքրիկ ընդունէ սիրով։

891.99
Բ-12

1918.
Աբաղատիպ Եղ. Մեսրոպեան։
Ռոստով Դոնի-վերայ.

891.9
Բ 12
01 JAN 2008

Ա. Յ. ԲԱԲԱՅԵԱՆ.
(A. B. John.)

ԻՄ ԱԼԲՕՄԻՑ

Աշխարհը ուժեղին է.
ՆԻՑՇԷԻՑ.

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԻՆ.

Իդէալի հերոս՝ ազնիւ կամաւոր,
Ռահվիրաղ փշոտ՝ անձուկ ահաւոր.
Գնում ես յառաջ անյաղթ մտքերով,
Նէրս փոքրիկ ընդունէ սիրով։

1918.
Արագատիպ Եղ. Մեսրովբեանց։
Ռոստով Դոնի-վերայ.

22666
26.02.2013
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Հովհ. Մասհանյանի անվան
45231-69

ԻՄ ԸՆԿԵՐՈՋ.

Վառ արշալույսը՝ ողբած հայրենի.
Բացու�՝ բացու՞մ ընկեր քաջարի.
Դուն, որ դիմացար շարան դարերին,
Քիչէլ սպաս է՝ մօտ է վախճանին։

Թող քեզ չ՚սառսեն՝ կռներն երկաթեայ,
Ցիշէ պապերուդ՝ ուխտը սրբազնեայ.
Ճակտիդ մէ՛ կնքիր դրոշմը ամոթի,
Հիւսուած անէծքով թոյն է տմարդի։

Երկիրն է՞ն կանանչ՝ սուրբ է մեզ համար,
Կրկին արիւնով գնուած ողբահար.
Մեր ոխ թշնամուն, կապենք պիտ զէնքով,
Անվերջ մեր դաշ՚ն՝ լի վառ յոյսերով։

—:•:—

Շ. Մ-ԻՆ.

Սիրել ուզեցի՝ կոյսը նորաբաց,
Անվերջ շռայլել համբոյր վառ այտաց.
Ամբողջ իմ կեանքը նրանով է սնուած,
Հպարտ այն կուրծքը՝ նիւթս է մտածած։

Աղջիկ սահեր, թոյլ տուր իմ ձեռքով,
Բանամ մազեր՛դ, թափեմ կուրծքդ ծով.
Սև ծով մազերումդ կուզեմ ես լողալ,
Այրուած, բորբոքուած սրտիս հանգիստ տալ։

Աստուած իմ հոգու՝ դարձած քիզ գերի,
Գնամ ուր որ էլ, նիւթն ես իմ մտքի,
Դուն, որ իմ կեանքը լցրիր սէր թոյնով,
Մինթէ ես մեկք չեմ, խօսիր զէթ սիրով։

Թոյլ տուր քեզ պաշտեմ կոկոն նորաբաց,
Իմ ջերմ աղօթքով խունկ ու մոմ վառած.
Սիրտս արցունքով կուզեմ քեզ թափել,
Մարմինդ նրբահիւս գիրկս ամփոփել։

—ıı·ıı—

Շ-ԻՆ.

Տիպլուածով տեսայ՝ դահլիճում շքեղ,
Զբօսնում դեղ-դեղ.
Հաղարի միջից ընտրեցի ես քեզ,
Խանդավառ հոգիս։

Երգի աշխարհ՝ հուժ մտքին տիրող,
Դառայ քեզ սիրող,
Կ՚տայի ես միշտ երանի՛ հազար,
Տայիր ինձ դաղար։

Կարող ես դուն որ, հասակով դալար,
Բուժել ինձ իսպառ.
Էլ ինչու՞ իզուր՝ տանջանքի բովում,
Թշուառիս այրում։

Մինթէ զուտ անդամ դուն չունիս բընաւ,
Կաքաւիկ իրաւ.
Հէգ պանդուխտ, անբախտ՝ թշուառիս կեանքին
Եղիր դուն պաշտպան։

—ıı·ıı—

Շ. Մ-ԻՆ.

Սիրուն հայ աղջիկ՝ անունդ է Զուշան.
Սիրտս արցունքոտ, քեզ պիտի բանամ.
Սիրոյ Աստուա՛ծ իմ, ես ուր պիտ գ՚նամ,
Նստած ծնդաչոք ձեր սրտի դռան։

Սիրտս փ՚ղձկում է՝ աչքերով լալկան,
Քեզեմ աղերսում՝ նեցուկը կեանքիս.
Ախր չէ՞ որ դուն՝ նոր բուժուած վերքիս,
Բացիր մոռացուած ցաւերն իմ հին։

Թոյլ տուր համբուրեմ մատներդ բարակ,
Նրանք իմ սրտի թելերն են սիրոյ.
Կուզեմ նուազել երգերն իմ յուզոյ,
Վրան մատներիդ թրռ-թրռուն հոգեակ։

Սևուկ աչերդ ինձ դարձրու անգին,
Նրանց մէջ ես կուզեմ իմ կեանքը կարդալ,
Ստողը իմ հոգու այնտեղ է փայլ-փայլ,
Անիւն իմ բախտի դարձրած քո դերին։

Կուրծքդ մարմարեայ ըստինքներ պահուում,
Կուզեմ ես ծրծել սուրբ անուշ կաթ՝դ.
Կեանքիս արևն՝ խ՝նայէ հոգուդ,
Չէ՛ որ իմ սիրտն էլ ապրել է ուզում։

Խօսէ՛ր, սփոփէ՛ր առաքեալ շրթունք,
Իմ դառն աղօթքը դէպ քեզ են ուղղուած.
Մի խօսք, և բաւ է. իմ ճամբան բռնած,
Ուղիղ ես գերթամ դէպ հեռուն խորունգ։

—॥•॥—

ՆՐԱՆ.

Զուշան իմ ծաղիկ. էհ մնաս բարով,
Մարեց իմ յոյսը ամեն ինչ կորաւ.
Դուն որ չուզեցիր դէթ նայել սիրով,
Հեռո՛ւն ես գերթամ չ՝տեսնեմ բ՝նաւ։

—॥•॥—

ՕՏԱՐ ԵՆՔ ՀԱՅԵՐ.

Օտարի լուծը շատ ենք մենք կրել,
Փոքր ու մեծ ամբողջ նրանց ենթարկուել.
Յարգանք ու պատիւ ցեխին ենք տուել.
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

Գիշեր ու ցերեկ անթարթ աշխատել,
Օտարի գրպանն ոսկով լի արել.
Զրգանքով ամբողջ սերունդ ենք փոխել,
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

Շինել ենք բարձր՝ տներ հոյակապ.
Փողոցներ ամբողջ իրար հետ շաղկապ.
Ձեռնունայն անյոյս օտարին թողել,
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

Գաղթել ենք ուր որ, ջիր ու ջանք թափել,
Օտարի համար միշտ դառն աշխատել.
Վաստակած փողերն նրանց ենք թողել,
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

Դուք գիտցած եղէք, ունինք ինչ որ էլ,
Պապերնիս ինչպէս նրանց են թողել.
Կ՝թողնենք նրանց այնպէս և մենք էլ,
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

Լսեցինք մենք միշտ անվերջ օտարին,
Զարան վեց դարեր յուսով խաբեցինք։
Այսօր մեզ մենակ անտէր են թողել,
Ասացէք հայեր, ի՞նչ ենք մենք արել։

—ooo—

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Ուզենանք եթէ մենք մեծ գործ կանենք,
Օտարի լծից շատ շուտ կազատւենք։
Մի փափագ միայն, մի սուրբ ուղղութիւն,
Հայրենիք երթանք, ընդդէմ թշնամուն։

Մենք ունինք այնտեղ թողուած պապերից,
Օջաղը մեր սուրբ՝ քանդուած թշնամուց.
Ձեռք ձեռքի տուած բոլորս միասին,
Հայրենիք երթանք, ընդդէմ թշնամուն։

—ooo—

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՍ ԻՄ ՄՕՐԸ.

Քեզ բերել եմ ազիզ մայրիկ՝ լուրը բարի իմ հայրենի,
Է՞ն լեռներից անուշ ձէնով՝ հնչէ փողը պատերազմի.
Բեր համբուրեմ աչ՚դ մայրիկ՝ որով պահիր կեանքիս օրեր,
Դու քուն կտրած՝ գիշեր ցերեկ,անբախտ որդուդ օրօր ասիր։

Դուն մոռացիր անուշ մայրիկ, քեզ համար չեմ ես ստեղծուած,
Սուրբ պապերիս ձայնը խրողդ ինձ կը կանչէ շարքը քաջաց.
Արտասուքի ջերմ կաթիլներն թող չը ցայտեն քո աչերից,
Անուժ կեանքի, վախկոտ սրտի՝ նշաններն են բղխած մաքից։

Ես չեմ ուզում դաւաճանի՝ դրոշմը կրել իմ ճակատին,
Չէ որ ունիմ երակներումս հայ պապերիս արիւնը հին.
Ուշ է արդէն անուշ մայրիկ, ես չեմ ուզում տունը մ՚նամ,
Մնաս բարով վերջին անգամ ներիր էլ յետ դուցէ չ՚գամ։

—ooo—

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔՍ ԻՄ Շ. Մ-ԻՆ.

Մնաս բարով, նորակոկոն վարդ՝ Զուշան,
Անշէջ խամրիր իմ վառ սիրոյ օջիւան.
Քեզ չեմ տեսնիլ այս թանգ ժամերն գէթ անգամ,
Որ իմ սրտիս փափագն առած ու գ՚նամ։

Հպարտ աչերդ դարձրու անգամ թշուառիս,
Վերջին խօսքս ասել կուզեմ սիրուհուս.
Երգ յուսով ապրել, սիրել ուզեցի,
Աւաղ կեանքը ինձ չ՚ժպտած թողեցի։

Սուրբ պարտք ունեմ ազգիս առաջ պիտ գնամ,
Տեսնել անկախ մայր Հայաստան անթառամ.
Թէ դու սիրես երկիրն ազատ հայրենի,
Կ՚գաս անշուշտ ի այց մերոնց արժանի։

Մի յիշատակ ես ուզեցի քեզ թողնել,
Անգօր գրչով ջերմ գծեցի այս տողեր.
Համբոյր սիրոյ կը քաղէի վառ շ՚բթից,
Ափսոս հեռուն դուն ընկած ես իմ բախտից։

*

* *

Երկնքի՛ արև՛, աստղեր անհամար,
Մեր մթին ճամբան ուրէ՞ այս տանում.
Գնում ենք գնո՛ւմ՝ անքուն, անդադար,
Ձեր ճանրուն կարօտ, ձեր լուսոյ շողուն։

Այն հեռու դաշտում, մթին ձորերում,
Ընկերներ ունինք մեզ են սպասում.
Առատ լոյս տուէք, բացէք մեր ճամբան,
Մեր ճամբան սուրբ է, տանում Հայաստան։

Ձեր լոյսը դժգոյն, ինչու՞ չէ փայլում,
Մեր երկիրն մթէ՞ խորդ է ձեզանում.
Յիշեցէք անցեալ փառքը մեր երկրի,
Բեկորն ենք չէ որ՝ այն սուրբ վաթանի։

*

* *

Համբոյրը կոյսի՝ սիրել ուզեցի,
Ա՜ւաղ ինձ կեանքը երբէք չը ժպտաց.
Գլուխս հանգչիլ կրծքում սիրածի,
Փափագս էր միակ սրտիս երազած։

Սար ու քար ընկած, գերթամ ես հեռուն,
Ընկերներս ազնիւ ինձ են սպասում.
Մոռանալ չ՚ուզեմ՝ կոյսը վառ ժպտուն,
Բայց ազգիս իղձը հեռուն է ձգտում։

Այդ լուծը ծանր է տանում այն հեռո՜ւն,
Ուր ազատ ապրել, կամ մահ վիճակում.
Սովոր ենք բայց մենք, մեր հին պապերից,
Ձենք վախենալ երբէք, դաժան սև մահից։

—॥••॥—

ԻՄ ԱՂՕԹՔՍ ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.

Դուն մեծ վարդապետ՝ իշխող դարերով,
Թոյլի զաղափար տուիր մեզ սիրով.
Որպէս սկզբունք ազգն իմ հալածուած,
Միշտ քեզ է դիմել, խսպառ մոռացած։

Ո՞ւր են քո սիրոյ, միջոցն փրկարար,
Մինթէ չես տեսնում ազգը քո թշուառ.
Դարեր շարունակ այսպէս պիտ տանջվինք,
Չէ՞ որ վաթանի՝ օջաղն մարեցինք։

Էլ չեմ աղօթիլ, իզո՞ւր են յոյսեր,
Ելքը փրկարար միակ մեր զէնքեր.
Տուած ձեռք-ձեռքի եղբայր եկ երթանք,
Մեր սուրբ օջաղը փառքով յետ խլենք։

—॥••॥—

ՀԱՅ ԿԻՆ.

Դուն որ հայ կին՝ գիտես ծնել քաջ հերոսներ,
Ժամն է արդէն ճանբայ դնել նրանց կուի.
Արիւնարբու զոռ թշնամուց երկիրն աւեր,
Որն այն հեռուն, զեռ կը մ՚խայ սևում ծխի,

Դուն տեղ ես, շատ հերոսներ, ազնիւ հայ կին,
Փափուկ տիկնանց էն հին շաղով անցել ընդմիշտ
Անշուշտ կանգնած բարձր կոչմանդ հաւատարիմ,
Չես խնայել որդիքդ արի զրկել գոռ դաշտ։

Կատղած թուրքը, մեր հին դրախտը, այրեց կրակով
Տեղումն անշարժ քարերն անգամ չը մնացին,
Դուն սովոր ես, գիտեմ հայ կին, ուրախ դէմքով,
Ու մինչև իսկ, միակ որդուդ զոհել աղդին։

—•••—

ԶՈՒԼՈՒՄԻ ԵՐԿԻՐ.

Արիւնո՞տ աշխար՝ երկիր զուլումի,
Ամայի դաշտեր, շինած գերեզման.
Դիակներ անթիւ, դարձած սև հողի,
Բուրում է բուրո՞ւմ հեռուից հոտն արեան։

Աւերակ վաթան՝ ըմբոստ վշտերի,
Անէծքի թոյնով լցած ահաւոր,
Քամո՞ւմ ես քամո՞ւմ, արցունք թշուառի,
Արնախառն հողի՝ բողոք դարևոր։

Ծխի՞ մէջ կորած՝ ամբողջ մոխրակոյտ,
Օթևան դարձած չար գուժ բուերի.
Մոռացած վաղուց, այրած հողակոյտ,
Եղած ես գերի անբախտ յուշերի։

—•••—

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ZUUՌ-Арм.ССР
Ս. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ
Ա. Мясникяна

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Այս գրքույկի վաճառումից ստացած արդիւնքը ամբողջովին յատկացւում է

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՏԻՆ.

Ստանալ ցանկացողները կարող են դիմել հետեւեալ հասցէով՝

Ростовъ на-Дону Б.-Садовая № 38.
Месропянъ

22666